



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

17084

368-3

12-95

1874

Օրուակն իջեցարս Ածպեանս Եւրպատեանս Խոնուարա  
ն ծեղան  
408 arm.  
U 463.

Sim. 463.

2a

1835 թ ՌԻՒՆ ԳԱՏԱՑՈՒՄ.

# Ռուսաստանի Ընկերութիւն

ԳՐԱԽԱԳՂՈՒԹԻՒՆԵՐԻ ԵՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱԳԱՀՈՂՈՒԹԵԱՆ:

ԳՐԱԽԱԳՂՈՒԹԻՒՆԵՐԻ ԱԳԱՀՈՂԱՅԻՆԸ

## Ա. Դասաւորութեան Համեմատ:

1) Ապահովութիւնը այն առիթով, եթէ մտնում է մի ապահովագրութեան հետեւին:

Կեանքի ապահովացման զաջնադրութիւնը կայանում նորանում, որ պայման է դրվում իւրեան ապահովագրութեան անձի և ապահովութեան (հսկելու) մասին: Այս պայմանով, ապահովացրած անձի մահուան դեպքում, ապահովութեան (հսկելութիւնը) պարտաւորութիւնը կանգնում է ինքնի պայմանով որոշած դրամագումարը: Մահուան դեպքում նստանիքին կամ նորա միւս ժառանգներին, և կամ առհասարակ այն մարդուն, որ ունի ապահովացման վկայական: Իսկ ապահովացնողը իւր կողմից պարտաւորութիւն



2010



է համարում իւրաքանչիւր տարի իւր ամբողջ կեանքումը ներկայացնել Շնկերութեանը պայմանադրած գումարը: Այս գումարը որոշվում է այն նկատողութիւնների հիման վերայ, որ արել են Ներուպայի զանազան տէրութիւններում մարդկերանց մահուան վերայ, և որոնք զբէթէ ամենայն տեղ ներկայացնում են մօտաւորապէս միատեսակ հետեւանքներ: Որովհետեւ, մեռնելու ընդհանուր օրէնքով, կրիտասարդը կարող է աւելի երկար ապրել, քան թէ ծերը, այս պատճառով, դրամագլխի ապահովութեան համար, որ պէտք է յետ տայ Շնկերութիւնը ապահովացնողի մահից յետոյ, երիտասարդը աւելի շատ անգամ կը ներկայացնէ տարեկան գումարը, քան թէ ծերը, և ուստի երիտասարդի ներկայացրած տարեկան գումարը աւելի փոքր պէտք է լինի: Այս տարեցտարի վճարուող գումարները որոշվում են, նայելով թէ ապահովացնողը որքան տարիներ ունի, այնպէս որ նորա ամբողջ կեանքումը այդ գումարները չեն փոփոխվում: Երբ այս տարեկան գումարները բարդվում են միմեանց վերայ և տոկոսների օգնականութիւնով աճում են, այն ժամանակը գոցանից կազմվում է մի դրամագլուխ՝ որով վճարվում են բոլոր ապահովացրած գումարները:

Շատերը կարծում են, թէ կեանքի ապահովացման նպատակին նոյնպէս բարեյաջողութեամբ կարելի է հասնել, յետ ձգելով պահպանողական գանձարանում յայտնի գումարներ, բայց սորանում շատ են սխալվում: Այստեղ մեծ զանազանութիւն կայ: Յայտնի բան է, պահպանելու համար ստացվում է այնքան, որքան կտրելի է պահպանել իսկ ընդհակառակն, կեանքի ապահովացման համար կը ստացուի այնքան, ով որքան կ'ցանկանայ: Աւելի լաւ է ասածներս բացատրենք օրինակով: Կիցուք, թէ մի որեիցէ

մարդ կանոն է շինել իւր համար իւրաքանչիւր տարի յետ ձգել մօտ 30 ու. որ նա ներկայացնում է պահպանողական գանձարանին, ստանալով իւր դրամագլխիցը 30%, և այս կերպով շարունակում է մինչև այն ժամանակը, երբ իւր ընտանիքի համար ժողովում է 1000 ու. Այս միջոցով ցանկացած գումարը ստանալու համար, երբ պահպանողական գանձարանը 30% է տալիս, կ'պահանջուէր զոնէ 25 տարի: Բայց եթէ այս գումար յետ ձգողը մեռնէր արդէն 10 տարուց յետոյ, այն ժամանակը նորա պահպանած գումարը կ'կազմէր ոչ թէ 1000 ու. այլ բոլորը 300 ու. և այս կերպով իւր ժառանգների համար, որոնք զրկուել են իւրեանց խնամատարից, նա չէր կարող ձեռք բերել այն ապահովութիւնը, որին նա կամենում էր հասնել, և նոցա համար կ'թողնէր միայն վերոյիշեալ փոքրիկ գումարը: Իսկ ընդհակառակն, եթէ յիշեալ 30 ուրքին իւրաքանչիւր տարի նա ներկայացնէր ապահովութեան Շնկերութեանը, այն ժամանակը, ինչ և պատահէր, նա կը թողնէր իւր ժառանգներին 1000 ու, եթէ մինչև անգամ մահը հասնէր նորան ներկայացման առաջին տարուց յետոյ: Ուրեմն, ապահովացնելով որոշած դրամագլուխ նա անպատճառ մեռք կ'բերէ այն, ինչոր մի ուրիշ մարդ ցանկանում էր կամ աշխատում ձեռք բերել պահպանելով:

Սորան կցած I Աղիւսակի մէջ նշանակուած են ամբողջ կեանքը ապահովացնելու համար ներկայացնելու գումարները (քրօն), որոնք իւրաքանչիւր տարի պէտք է ներկայացուին դրամագլխների ապահովութեան Ռոտայստանի Շնկերութեանը, նայելով թէ որքան տարիք ունի ապահովացնողը ապահովացնելու ժամանակը: Այս կերպով իւրեանց ապահովացնող անձինքը օգուտ են բարոյւն ոչ միայն նորանից, որ ամբողջ կեանքումը միևնոյն գումարն

8848-Ա.Բ. 27414

են ներկայացնում, այլ և նորանից, որ (Ընկերութեան կանոնադրութեան § 49-ի հիման վերայ) 5 կամ աւելի տարիներ անցնելուց յետոյ կարող են ստանալ Ընկերութիւնից այնքան գումար, որքան կ'հասնի նոցա նայելով իւրեանց ներկայացրած գումարներին, եթէ կ'ցանկանան կրճատել ապահովացնելը, կամ փոխ առնել Ընկերութիւնից այդ գումարը՝ զրաւ դնելով վկայականը: Այդ գումարի մօտաորակէս մեծութիւնը, որ կարող է պահանջել ապահովացնողը՝ նշանակուած է առանձին աղիւսակում:

Այն ապահովացնողը՝ որ ծնուած օրից հասնում է 80 տարեկան հասակին, այնուհետեւ գումարներ ներկայացնելուց ազատ է մնում, եթէ միայն այդ գումարները նա ներկայացրել է 25 տարի:

II Աղիւսակին համեմատ, վերոյիշեալ կերպով կարելի է ապահովացնել՝ ներկայացնելով նշանակած գումարները մի անգամից, կամ տարեցտարի, որ և շարունակվում է ապահովացման միայն առաջին 5, 10 կամ 15 տարիները, որոնցից յետոյ ապահովացնողը ազատվում է հետեւեալ անդամներում ներկայացնելուց:

50-ից մինչև 1000 ռ. (Թաղման փող) ապահովացնելը նշողուելում է VIII-րդ Աղիւսակին համեմատ:

Բացի ամբողջ կեանքը ապահովացնելուց կարելի է պայման դնել իւրեան ապահովացնելու համար որոշուած կարծ ժամանակամիջոցներով (срокѣ), այսինքն՝ 1 տարի ժամանակով և մինչև 16 տարի ժամանակ, ներկայացնելով այնքան փոքր գումարներ, որքան մարդ փոքր է սիրտ անում: Իսկ այսպիսի ապահովացնելը միայն մի քանի հանգամանքներում համապատասխան է լինում ցանկացած նպատակին, զորօրինակ, երբ ապահովացնելը ազատում է ապահովացնողին իւր պարտքից: Բայց սխալվում են նա-

քա, որոնք կարծում են, թէ կարծ կարճ ժամանակամիջոցներով ապահովացնելով կարող են հասնել այն նպատակին, որին ուրիշները հասնում են՝ ամբողջ կեանքը ապահովացնելով: Որովհետեւ, ապահովացման իւրաքանչիւր ժամանակամիջոցի լրանալուց յետոյ նոր ապահովացնողը այնքան աւելի մեծ գումար պէտք է վճարէ, որքան մեծացել է իւր տարիների թիւը:

Բացի սորանից, նա այլ ևս չի կարող ապահովացնել, եթէ նորա առողջութեան մասին բժշկի տուած վկայականը անբաւարար կ'լինի, աչքի առաջն ունենալով, որ բժիշկը պէտք է քննէ նորա առողջութիւնը ամենայն անգամ, երբ նա նորոգում է ապահովացման ժամանակամիջոցը: Իսկ ամբողջ կեանքը ապահովացնելու համար այսպէս չէ կարող պատահել: Յայտնի բան է, նոյնպէս առանձին զործ է, որ 1, 5, 10 կամ 15 տարի ժամանակամիջոցով ապահովացնելու համար չի կարելի վերադարձնել (կանոնադրութեան § 49-ի զօրութեամբ) ներկայացրած գումարներին համապատասխան փող: Այս տեսակ ապահովացման համար ներկայացնելու գումարները նշանակուած են V աղիւսակում:

Եթէ Ընկերութիւնը, օգուտ քաղելով փորձից, չէ սիրտ անում ապահովացման առաջին տարիների համար, այն ժամանակը VI-դ Աղիւսակին համեմատ կարելի է ապահովացնել ամենափոքր գումարներով, պայման դնելով վըճարել ապահովացրած գումարը միայն այն դիպուածում, եթէ ապահովացնողը կ'ապրէ առաջին 10 տարիները:

VII-դ Աղիւսակին համեմատ մեծ գումարներ ապահովացնելու համար պայման է դրվում, որ ապահովացման առաջին 10 տարիների անցնելուց յետոյ ապահովացրած գումարը մեծանայ իւրաքանչիւր տարի իւր <sup>1</sup>/<sub>20</sub> մաս-

նով Այսինքն, եթէ ապահովացնող անձը մեռնէ ապահովացման տասնամիկերորդ տարումը, սկզբնական ապահովացրած գումարը, զորօրինակ 1000 ռ. ածուծ է դառնում 1050 ռ. տասններկրորդ տարումը՝ 1110 ռ. եւ այն. ապահովացնողի կեանքի իւրաքանչիւր հետեւեալ տարիներումը այդ գումարը պէտք է մեծանայ 50 ռուբլով: այնպէս, որ եթէ նա կ'ապրէ 20 տարի, այն ժամանակը իւր ժառանգներին թողնում է 1000 ռուբլի փոխանակ, 1500, 30 տարուց յետոյ՝ 2000, իսկ 50 տարուց յետոյ 3000 ռուբլի:

2) Կենդանութեան ժամանակը վճարուող դրամազխի ապահովացները:

Այս տեսակ ապահովութիւնը կայանում է նորանում, որ ապահովացնողը ներկայացնելով իւրաքանչիւր տարի որոշած գումար, ստանում է դրամազուխը առաջուց նշանակած ժամանակամիջոցին: Եթէ ապահովացնողը կ'հասնէ պայմանաթղթի մէջ որոշած տարիներին, այն ժամանակը դրամազուխը իսկոյն վճարվում է հենց նորան: Իսկ եթէ ապահովացնողը մեռնում է նշանակած ժամանակից առաջ, այն ժամանակը յիշեալ դրամազուխը վճարվում է մեռնողի ժառանգներին կամ նորան, ով որ ունէ օրէնքով հաստատած ապահովացման վկայականը: Այսպէս վճարվում է կամ իսկոյն ապահովացնողի մահից յետոյ (III Արիւսակին համեմատ), կամ ոչ վաղ ապահովացնողի առաջուց նշանակած ժամանակամիջոցից (IV-դ Արիւսակին համեմատ): Յայտնի բան է, այս տեսակ ապահովացման համար ներկայացնելու գումարը աւելի մեծ պէտք է լինի սովորականից: Այս ապահովութիւնը արժանի է մի առանձին ուշադրութեան, որովհետեւ ապահովացնողը այս կերպով աւելի

ծերացած հասակումը ձեռք է բերում իւր համար այն օգնականութիւնը, որ անպատճառ պէտք է ունենայ ամենայն մարդ, իսկ եթէ մեռնում է նշանակած ժամանակից առաջ՝ ապահովացնում է իւրեանցից յետոյ թողած ընտանիքի ապագան:

1863 թւին, XXI-դ և XXII-դ Արիւսակներին համեմատ սահմանուած է մի նոր տեսակ ապահովացում: Այս ապահովացումով, եթէ ապահովացնողը մեռաւ կամ որևիցէ պատճառով կրճատեց ապահովութիւնը այն ժամանակամիջոցից առաջ, որ նա առաջուց նշանակել էր դրամազուխը յետ ստանալու համար, ընկերութեանը ներկայացրած գումարները կրկին ամբողջապէս յետ է ստանում առանց տոկոսների: Սակայն այս գումարները կարելի է յետ ստանալ դրամազխի վճարման համար նշանակած ժամանակամիջոցին, կամ աւելի վաղ, իսկ այսպիսի դիպուածում պէտք է հաշուել և հանել այն տոկոսը, որ կ'ըբերէր դրամազուխը մինչև նշանակած ժամանակամիջոցը: Այս տեսակ ապահովացումն ընդունվում է առանց բժշկական վկայականի:

3) Երկու անձների փոխադարձ ապահովութիւնը:

Երկու անձների, օրինակ, կնոջ և մարդու, կամ այն անձների, որոնք որևիցէ հանգամանքներով յարաբերութիւն ունին միմեանց հետ, այսպիսի երկու անձի կեանքի փոխադարձ ապահովութիւնը ընդունվում է այն պայմանով, որ եթէ ապահովացնող անձներից մէկը մեռնի, այն ժամանակը (IX-դ Արիւսակին համեմատ) գումարը պէտք է վճարուի կենդանի մնացողին, կամ եթէ մեռնին երկու ապահովացնողները եւս, (X-դ Արիւսակին համեմատ) գումարը

կ'վճարուի մի երրորդ անձնին: Այս տեսակ ապահովութիւնով կարելի է հասնել բազմադան նպատակներին:

Բացի սորանից, XI-դ Աղիւսակին հիմնմատ, Րնկերութիւնը ընդունում է դրամադրելի ապահովութիւնը այն պայմանով, որ ապահովացնողի մահից յետոյ դրամադրուիւր կ'վճարէ վրայաճղի մէջ յիշած անձին, եթէ այս վերջինը աւելի կ'ապրէ ապահովացնողից: Այս ապահովութիւնը համապատասխանում է միևնոյն նպատակին, որ աչքի առաջ է ունենում այն անձը, որ ապահովացնում է իւր ռոճիկը հետեւալ Բ. դասաւորութիւնով: Այսինքն այս տեսակ ապահովութիւնով կարելի է խնամք դնել մի որեւիցէ մեքճաւոր անձի վերայ և այն ժամանակը, երբ մեռնում է խնամատարը: Բացի սորանից, այս տեսակ ապահովութիւնը աւելի լաւ է միւսներից, որովհետեւ ներկայացման գումարը փոքր է:

**ԱՊԱՀՈՎԱՑՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՆՈՆՆԵՐ:**

Րնկերութիւնը երկու օեւից ևս ընդունում է ապահովացնելու համար անձինք 15-ից մինչև 60 տարեկան, իսկ նոքա, որոնք ցաւագարուած են երկարատե հիւանդութիւններով՝ չեն կարող ընդունուիլ ապահովութեան համար: Ապահովութեան համար պայման կապել ցանկացողները դիմում են Պետերբուրգ՝ Րնկերութեան գլխաւոր հաշուետունը (контора), իսկ նահանգներումը՝ Րնկերութեան գործակալներին և նոցա ցոյց տուած բժշկին, որին սլարտաւոր են սլարդապէս և առանց ծածկելու պատասխանել նորա բոլոր հարցերին, իւր առողջութեան վերաբերութիւնով, թէ ինչպէս է նորա առողջութիւնը այժմ, և ինչպէս էր առաջ: Րնկերութեան ընդունած ձեով գրած

յայտարարութեան հետ պէտք է ներկայացնել նոյնպէս մետրիքական կամ մի այլ վիայական, որ բաւականութիւն կ'տայ ապահովացնողներին հասակների մասին, նոյնպէս և տարէց տարի ներկայացնելու գումարը և արքունական մաքսը (пошлина): Այս բոլորը ներկայացնելուց յետոյ ապահովացնողը ստանում է Րնկերութիւնից ժամանակաւոր անդորրադիր (квитанция): Եթէ պատահի, որ Վարչութիւնը չ'ընդունէ ապահովութիւնը, այն ժամանակը՝ անդորրադիրը վերադարձնելով, ապահովացնողը իսկոյն յետ է ստանում իւր ներկայացրած փողը:

Ապահովացման վկայականը պահպանում է իւր նշանակութիւնը մինչև այն ժամանակամիջոյր, որ նշանակուած է այդ վկայականի մէջ, եթէ միայն ապահովացնողը նշանակած գումարը ներկայացրել է իւրաքանչիւր տարի վկայաթուղթ տալու օրից, կամ որոշած 3-ամսական ժամանակամիջոցից աւելի չէ ուշացրել: Նշանակած գումարը պէտք է ներկայացնել կամ այն գործակալին, որի հետ ապահովութեան պայման է դրած, կամ ուղղակի Րնկերութեան գլխաւոր հաշուետանը, որ տալիս է ապահովացնողին նորոգած անդորրադիր: Նահանգներում սորա համար գործակալները տալիս են ապահովացնողին ժամանակաւոր անդորրադիր, որոնց 3 ամսուայ ընթացքում ապահովացնողը պէտքէ փոխէ գլխաւոր հաշուետան իսկական անդորրագրերի հետ: Այս պատճառով ապահովացնողները պէտքէ աշխատեն յետ տալ այդ իսկական անդորրագրերը ժամանակին: Իսկ եթէ յետ տալը նշանակած 3 ամսական ժամանակամիջոցից աւելի կուշացնեն, պէտքէ այս մասին յայտնեն գլխաւոր հաշուետանը, որ մի գուցէ կորցնեն իւրեանց իրաւունքները:

Բացի ներկայացման գումարից, կանոնադրութեան § 5-ին համաձայն, իւրաքանչիւր ապահովացրած հազար ռուբլի համար պահանջվում է իւրաքանչիւր տարի 25 կոպ. արքունական մաքս: Ապահովացման վկայականի ուղարկելու համար վճարվում է 1 ռուբլ:

Ներկայացման գումարները կարելի է վճարել, եթէ ցանկանում է ապահովացնողը, 6, 4, և 3-ամսական ժամանակամիջոցներով, աւելացնելով տոկոսները:

Ընկերութիւնը չէ յիշեցնում ապահովացնողին ներկայացման գումարների վճարելու ժամանակամիջոցը, իսկ եթէ ապահովացման վկայականումը նշանակած ժամանակամիջոցին ապահովացնողը չի վճարել, այն ժամանակը Ընկերութիւնը նորան 3 ամիս ժամանակ է տալիս, որ նա ներկայացնէ պայմանաւորուած գումարները: իսկ այս դիպուածում նորանից տուգանք է առնվում. առաջին ամսին առնվում է ներկայացման գումարի 1<sup>0</sup>/<sub>0</sub>. երկրորդ ամսին — 2<sup>1</sup>/<sub>2</sub><sup>0</sup>/<sub>0</sub> և երրորդ ամսին — 4<sup>1</sup>/<sub>2</sub><sup>0</sup>/<sub>0</sub>: Եթէ ապահովացման վկայականի մէջ նշանակած ժամանակամիջոցից անց կենայ երեք ամիս և չորրորդ ամսուայ առաջին օրը գործակալին կամ Ընկերութեան վարչութեանը ապահովացնողը չվճարէ ներկայացնելու գումարը և տուգանքը, այն ժամանակը ապահովացման վկայականը կորցնում է իւր գորութիւնը և ոչնչացած է համարվում (համաձայն կանոնադրութեան § 47-ին):

ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ԾՈՎԱԳՆԱՑՆԵՐԸ, բացի սովորական ապահովութիւնից, կարող են կապել ապահովութեան պայմաններ այն առանձին վտանգների առաջն առնելու համար՝ որոնք յարաբերութիւն ունին նոցա ծառայութեան հետ: Այս դիպուածում նոքա պէտքէ լրացուցիչ գումարներ տան ներկայացնելու գումարի հետ իւ-

րաքանչիւր պատերազմական վտանգների դէմ՝ զինուորականները պէտքէ տան 10<sup>0</sup>/<sub>0</sub>, իսկ ծովագնացները ծովային վտանգների դէմ — 20<sup>0</sup>/<sub>0</sub>: Այս լրացուցիչ ապահովութեան պայմանը կարելի է կապել խաղաղութեան ժամանակը միայն, ապա նա ճիշտ կ'մնայ պատերազմական ժամանակում ևս (§ 50):

Ցամաքային կամ ծովային ճանապարհորդութիւնների մասին, որոնք մի տարուց աւելի չեն շարունակվում, վարչութեանը չէ յայտնվում: իսկ աւելի շարունակուող ճանապարհորդութիւնների, կամ մի տեղից միւսը տեղափոխուելու մասին հարկաւոր է յայտնել Ընկերութեանը, որի վճուից կախուած է՝ թողնել արդեօք առաջուայ գումարը, թէ մեծացնել: Սակայն այս մեծացնելը ներկայացման գումարի 20<sup>0</sup>/<sub>0</sub>-ից աւելի չպէտքէ լինի (§ 52):

Ապահովացման վկայականին համեմատ Ընկերութիւնը չէ վճարում հետեւեալ դիպուածներում՝

- 1) Եթէ դատաստանը գտնում է, որ ապահովացնողը մեռել է անձնասպանութեամբ կամ մենամարտութիւնից:
- 2) Եթէ ապահովացնողը մեռնում է այն հնարած գործողութիւնից, որից նորա կեանքը վտանդի ենթարկուելու կամ կրճատուելու, և թէ այդ գործողութիւնը կատարել է այն անձը, որ լիովին կամ մասնաւորապէս պէտքէ ժառանգէր ապահովացրած գումարը:
- 3) Եթէ ապահովացնողը ստանում է մահուան պատիժ կամ մի այլ սորա նման քրէական պատիժ և արտօրական աշխատութիւն:
- 4) Երբ ապահովութեան պայման դնելուց յետոյ կը յայտնուի, որ ապահովացնողը իւր ստորագրած յայտարարութեան մէջ թոյլ է տուել իւրեան կեղծ ցուցմունքներ անել կամ ծածկել է նշանաւոր հանցամանքներ, կամ թէ

նորա ներկայացրած վկայականների մէջ կ'երևին կեղծ ցուցմունքներ, որոնք առանձին վերցրած կամ միասին պէտքէ աղղկցութիւն ունենային ապահովութեան ընդունելու վերայ:

5) Եթէ ապահովացնողը չէ վճարում ապահովութեան համար որոշած գումարները, համաձայն կանոնադրութեան § 57-ին:

6) Երբ ցամաքային—զինուորականութեան կամ ծովային վարչութեանը ծառայողը կ'սպանուի պատերազմի մէջ, կամ կ'մեռնի վէրքերից, կամ թէ կ'կորչի նաւաբեկութեան ժամանակը, § 50-ին համեմատ, ապահովացրած չլինելով պատերազմի առանձին վտանգներից և ծովային դժբաղդութիւններից:

Միևնոյնը վերաբերում է և այն անձինքներին, որոնք չսնվում են վաճառականական նաւերի վերայ, եթէ նոքա չէին ապահովացրած իւրեանց պաշտօնի առանձին վտանգների դէմ (կանոնադրութեան § 53):

Ապահովութեան համար առաջարկութիւնները այն տեղերից, ուր ընկերութիւնը չունէ իւր գործակալները, և որոնք, հետևաբար, ներկայացվում են առանց նոցա մէջնորդութեան, ընկերութիւնը կ'ընդունէ միայն իբրև առանձին բացառութիւն, այսինքն, եթէ նոցա մասին բարեյոյս վկայութիւններ են տալիս, և թէ նոքա ունին առողջութեան վկայականներ, որ նոքա ստացել են հասարակութեանը յայտնի բժիշկներից բայց, ինչպէս յայտարարութիւնը, նոյնպէս և վկայականը պէտքէ գրուած լինին կանոնադրական Բլանկովեան Թերթերի վերայ, որոնց կարելի է ստանալ գլխաւոր հաշուետնից կամ մերձաւոր գործակալից: Այս դիպուածում բժիշկը իւր գրած վկայականը տալիս է ապահովութիւն ցանկացողին ոչ այլ ինչ եղանակով,

բայց եթէ կնքած կոնվերտով, կամ այդ վկայականը ուղղակի ուղարկում է ընկերութեան գլխաւոր հաշուետանը:

## Արքունական թոշակների ապահովութիւնը

### Բ. դասաւորութիւնով

Յօդուտ այն անձի, որ ողջ է մնում ապահովացնողի մահից յետոյ

Իւրաքանչիւր տարի յայտնի գումար վճարելով, իւր մահից յետոյ ապահովացնողը թողնում է իւր կնոջ, երեխայի, կամ ապահովացման վկայականի մէջ յիշած անձնի համար արքունական թոշակ, որ վճարվում է տարէ ցտարի սկսելով ապահովացնողի մահուան օրից և կրճատվում է այն անձնի մահովը, յօգուտ որոյ ապահովացրած էր այդ գումարը:

Յայտարարութեան հետ ապահովացնողը ներկայացնում է ինչպէս իւր սեփական մետրիքական վկայականը, նոյնպէս և այն անձինը՝ որի համար կատարվում է ապահովութիւնը: Այս ապահովութեան համար աչքի առաջն պէտքէ ունենալ Ա. դասաւորութեան մէջ նշանակած այն մնացած կանոնները, որոնք գրուած են ներկայացման գումարների վճարելու մասին կային:

### Ապահովութիւնը

### Գ. դասաւորութիւնով

Կենսական եկամուտի, յօգուտ նոյն խի ապահովացնողի:

Ռուսաստանի ընկերութեան մէջ կարելի է ձևաք բերել ոչ աւելի քան 3000 ռուբլի կենսական եկամուտ:

Այսպիսի եկամուտ կարելի է ձեռք բերել երկու տեսակ-  
 ներկայացնելով յայտնի դրամազուլու, կամ տարէցտարի  
 գումարներ վճարելով մինչև այն ժամանակամիջոցը, որ ս-  
 րոշուած է եկամուտի վճարելու համար: Գրամազուլուը և  
 ներկայացրած գումարը մնում են իբրև ընկերութեան սե-  
 փականութիւն: Ընկերութիւնը կենսական եկամուտը տա-  
 լիս է ապահովացնողին այն ժամանակը, երբ նա հասնում  
 է 50, 55, 60 և աւելի տարիներով հասակին (յետաձգուել  
 եկամուտ, XVI-դ Աղիւսակին համեմատ) կամ, երբ դրամա-  
 զուլուը ներկայացնելուց յետոյ անցնում է մի տարի (XII-դ  
 Աղիւսակին համեմատ): Ապահովացնողի մահից յետոյ եկա-  
 մուտը չի ստացվում:

XIV-դ Աղիւսակին համեմատ ընդունվում է կեն-  
 սական եկամուտի ապահովութիւնը, որ 10 տարուց յետոյ  
 սճում է  $\frac{1}{20}$  մասնով—այսինքն. ապահովացնողը առաջին  
 10 տարու մը ստանում է առաջուց որոշած եկամուտը,  
 զորօրինակ, 100 ու. յետոյ 11-դ տարու այ համար ստա-  
 նում է 105 ու. 12-դի համար 110 ու. և այլն. կեանքի իւ-  
 րաբանչիւր հետեւեալ տարիների համար՝ 20 երկրորդական  
 մասնով աւելի: Այսպէս եթէ կեանքը նշանաւոր կերպով  
 շարունակվում է՝ կենսական եկամուտը սկզբնական 100  
 ուուրից կարող է աճել դառնալ՝ 20 տարուց յետոյ մինչև  
 150, 30 տարուց յետոյ մինչև 200, իսկ 50 տարուց յետոյ  
 մինչև 300 ուուրը:

XV-դ Աղիւսակին համեմատ ընդունվում է երկու  
 անձների, զորօրինակ, մարդու և կնոջ համար փոխադարձ ա-  
 պահովութիւն: Ապահովացնողներից մէկի մահից յետոյ և-  
 կամուտի ստանալու իրաւունքը լիովին անցնում է ողջ  
 մնացող 2-դ անձին: Այս տեսակ ապահովութիւնը զլիսա-  
 ւորապէս ձեռնտու է անորդի ամուսինների համար:

Յայտարարութեան հետ, որի ստորագրութիւնը օրի-  
 նաւոր կերպով հաստատած է՝ ապահովացնողը միայն ներ-  
 կայացնում է իւր տարիների օրինաւոր վկայականը:

Ներկայացման գումարների վճարելու կանօնները մի-  
 ենոյնն են, ինչոր կան Ա. դասաւորութեան մէջ:

## Ապահովութիւնը

### Դ. դասաւորութիւնով:

Ապահովութիւններ յօդուտ գնում հասնելու:

Միանգամից դրամազուլու ներկայացնելով, կամ իւրա-  
 քանչիւր տարի գումարներ վճարելով, կարելի է ապահո-  
 վացնել ղեռահաս երեխայի համար յայտնի դրամազուլու և  
 այս կերպով յետ ձգել այնքան գումար, որքան հարկաւոր  
 է երեխայի դաստիարակութեան, բաժինքի, զինուոր տա-  
 լուց ազատելու և այլ սոցա նման ծախսերի համար: Այս  
 դրամազուլուը կարելի է վերագարձնել ոչ վաղ երեխայի  
 12 տարեկան և ոչ ուշ 24 տարեկան հասակին հասնելուց:  
 Ներկայացման գումարների մեծութիւնը որոշվում է երե-  
 խայի տարիներին համեմատ, որ նա ունէր ապահովացման  
 ժամանակը: Որքան երեխան փոքր է, այնքան ևս փոքր է  
 ներկայացման գումարը: Այն գումարը, որ վճարվում է  
 ապահովացման առաջին տարու մը, չէ փոխվում հետեւեալ  
 տարիներու մը: Ապահովութեան այս միջոցի մասին մանա-  
 ւանդ խորհուրդ է տալիս ընկերութիւնը իբրև սանիկների  
 համար ամենաօգտաւէտ ընծայ: Եթէ երեխան կմեռնէ ա-  
 պահովացման վկայականի մէջ նշանակած ժամանակամի-  
 ջոցից առաջ, այն ժամանակը մեռնելուց առաջ ներկայա-

դրած բոլոր փողերը մնում են յօդուտ ընկերութեան: Այժմ  
 ներկայացման գումարները այլ ևս չեն վճարուիլ ընկերու-  
 թեանը ապահովայնողի մահուան, կամ մի այլ պատճա-  
 ռով, այն ժամանակը երեխան կորցնում է իրաւունքը  
 իւր համար ապահովացրած գումարի միայն մի մասը ստա-  
 նալու, և այնուհետև ազատ լինելով գումարներ վճարելուց,  
 նա նոր վկայական է ստանում այն դրամադրութի համար,  
 որ համապատասխանում է ներկայացրած գումարին (տես  
 կանոնադրութեան § 63, և XXVIII-դ Աղիւսակը): Բայց ով որ  
 ցանկանում է օգուտ քաղել այս իրաւունքից, այս մասին  
 պէտք է յայտնի ընկերութեանը մի տարուայ ընթացքում:  
 Իսկ տարուայ սկիզբը պէտք է հաշուել վճարման համար  
 նշանակած վերջին ժամանակամիջոցի օրից:

Այն անձը, որ ցանկանում է չլրկուել իւր դրամա-  
 դրութից, եթէ ապահովացրած երեխան մեռնում է դրամա-  
 դրութի յետ ստանալու համար որոշած ժամանակից առաջ  
 վերոյիշեալ XXI-դ և XXII-դ աղիւսակների հիման վերայ  
 կարող է ապահովացնել երեխային:—Ունենալով այս տե-  
 սակ ապահովութիւն, որ մանաւանդ օգտաւէտ է երեխա-  
 ներին, եթէ պատահի որ ապահովացրածը մեռնի, կամ ե-  
 թէ ապահովութիւնը կրճատուի այն ժամանակամիջոցից ա-  
 ռաջ՝ երբ ընկերութիւնից պէտք է յետ ստացուի դրամա-  
 դրութը:—Ընկերութեանը ներկայացրած գումարները ա-  
 ռանց տոկոսների լիովին յետ են ստացվում:

Այս տեսակ ապահովութեան համար ևս ապահովա-  
 ցնողը ներկայացնում է յայտարարութիւն իւր ստորագրու-  
 թիւնով և այն երեխայի մետրիքական վկայականը, որի  
 համար ապահովացնում է դրամադրութը:

Ներկայացման գումարների վճարման կանոնները մի  
 ենոյնն են, ինչոր դրուած են Ա. դասաւորութեան մէջ:

Բացի դրամագրութեան աստիճանից ընկերու-  
 թիւնը օգտակար համարեց սահմանել թոշակների նոր տե-  
 սակ ապահովութիւն, կամենալով ապահովել դեռահասանե-  
 ըին դաստիարակութեան համար հարկաւոր միջոցներով:

Այս կերպով, նախատես հայրը՝ միանգամից կամ  
 տարեցտարի գումարներ վճարելով կարող է ձեռք բերել  
 իւր որդիքիւնաց համար այն թոշակների ստանալու իրա-  
 ւունքը, որոնք վճարվում են ուսումնաբանական կրթու-  
 թեան ժամանակը, 11 տարեկանից մինչև 18 տարեկան  
 հասակը (XIX-դ Աղիւսակին համեմատ) և 19 տարեկանից  
 մինչև 23 տարեկան հասակը (XX-դ Աղիւսակին համեմատ):

Եթէ դեռահասը ապահովացրած է այս աղիւսակնե-  
 րից մէկին համեմատ, նա կարող է ապահովացնուիլ նաև  
 միւս աղիւսակին համեմատ:

51412

ԱՊԱՀՈՎԱՅՐԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՍՅԱՆԱԼԸ

Ընկերութեան բոլոր վճարները կատարվում են Պե-  
 տերբուրգումը ընկերութեան վարչութիւնով, կամ գործա-  
 կալների միջնորդութիւնով, հանելով այս վերջին դիպուա-  
 ծումը ուղարկելու ծախսը, այն ժամանակը միայն, երբ ա-  
 պահովացնողը կ'ներկայացնէ վարչութեանը ապահովացման  
 վկայականը իւր ստորագրութիւնով, թէ ստացել է նշա-  
 նակած գումարը: Եթէ ապահովացման վկայականների տէ-  
 րերը ցանկանան կարող են փողերը ուղղակի փոշտայով  
 ստանալ, առանց գործակալների միջնորդութեան:

Ա. դասաւորութիւն Ապահովացնողի մեջից յետոյ, նո-  
 րա մահուան մասին ապահովացնող վկայականի տէրը  
 պարտաւոր է յայտնել ընկերութեան դրամադրութիւնը կամ  
 աւելի մօտիկ գործակալին, ցոյց տալով վկայականն ա-

NOBEXEMT  
 Казенно Ная  
 2000

կը մահուան յայտնի կամ ճշմարիտ պատճառը: Բայցի սորանից նա պէտքէ ներկայացնէ՝

ա) Տեղական հոգևոր իշխանութեան վկայականը թաղման մասին:

բ) Այն բժշկի տուած վկայականը, որ նայեցողութիւն էր անում մեռնողի վերայ:

Այս վկայականները պէտքէ օրինաւոր կերպով հաստատուած լինին վկաներով (կանօնադրութեան § 57 և 60 միևնոյն տեղում ևս կասկածաւոր դիպուածներէ մասին):

Պատշաճաւոր վկայականներէ ներկայացնելուց յետոյ ապահովացրած դումարը վճարվում է ոչ աւելի ուշ, քան թէ երեք ամիս ժամանակում ( § 59):

Եթէ ապահովացնողը ցանկանում է, որ իւր ժառանգը հնչտութիւնով ստանայ ապահովացրած դրամագրութիւնը, այն ժամանակը ապահովացման վկայականի մէջ ապահովացնողը պէտքէ ունենայ իւր մակագրութիւնը (ինչպէս այս անվում է վէկտէնների և այլ փողերի վկայականների վերայ), որ պէտքէ վաւերացրած լինի Ընկերութեան գլխաւոր հաշուետան ստորագրութիւնովը, կամ գործակալով, կամ երկու յայտնի վկաներով, և կամ պօլիցիական իշխանութիւնովը (§ 65): Եթէ ապահովացման վկայականի վերայ մակագրութիւն չկայ, այն ժամանակը այս վկայականի տէրը պարտական է ապացուցանել օրէնքով, թէ այդ վկայականը իւր սեփականութիւնն է (§ 66):

Բ. դասաւորութիւն: Այն անձը, որի համար կատարուած է ապահովութիւնը, ապահովացնողի մահից յետոյ ներկայացնում է միևնոյն վկայականները, որոնք յիշուած են Ա. դասաւորութեան մէջ, միևնոյն ժամանակը ապացուցանելով, թէ յիշուած ինքը այն անձն է՝ որ յիշած է ապահովացման վկայականի մէջ: Սորա համար այս անձը ներ-

կայանում է Ընկերութեան գլխաւոր հաշուետանը կամ գործակալին երկու բարեյոյս վկաների հետ, որոնք հաստատում են, թէ յիշուած նա այն անձն է: Իսկ եթէ նա չէ կարող անձամբ ներկայանալ, այն ժամանակը կարող է Ընկերութեանը ներկայացնել իւր կենդանութեան վկայականը, որ կտայ նորան տեղական կառավարութիւնը: Սորանից յետոյ, վերադարձրած ապահովացման վկայականի փոխարէնը Ընկերութիւնը աալիս է թոշակի ստանալու վկայական, սորա հետ և առաջին տարուայ թոշակը, որ այս ժամանակից սկսած վճարվում է իւրաքանչիւր տարի ապահովացնողի մահուան օրը մինչև այն անձնի մահուան օրը՝ որ օգուտ է քաղում այս թոշակից:

Գ. դասաւորութիւն: Երբ մօտենում է ապահովացման վկայականի մէջ նշանակած ժամանակամիջոցը կենսական եկամուտի վերադարձնելու համար, ապահովացնողը պէտքէ այդ վկայականը ներկայացնէ Ընկերութեան գլխաւոր հաշուետանը և միևնոյն ժամանակը պէտքէ ապացուցանէ իւր կենդանութիւնը կամ անձամբ ներկայանալ կամ այն վկայականի միջնորդութիւնով, որ կ'տայ նորան տեղական կառավարութիւնը նորա կենդանութեան մասին: Եթէ կենսական եկամուտից օգուտ քաղողը անձամբ չէ կարողանում ստանալ այդ եկամուտը, այն ժամանակը այն անձը որին կարելի է հաւատալ, իւրաքանչիւր տարի գլխաւոր հաշուետանը պէտքէ ներկայացնէ ապահովացնողի կենդանութեան մասին վկայականը նորա տուած հաշտարմական թերթովը (добрепность) կամ օրինաւոր կերպով վավերացրած անդորրագրով:

Դ. դասաւորութիւն: Այս դասաւորութեանը վերաբերում են այն բոլոր կանոնները՝ որոնք նշանակած են Գ. դասաւորութեան մէջ: Ընկերութիւնը իսկոյն վերադարձ-

նում է դրամազուտը, երբ տեղեկանում է, թէ ստացողը ճիշտ այն անձն է, որի համար ապահովացրած է:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Ընկերութեան՝ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ հաստատած կանոնադրութեան հիման վերայ նորա հիմնական դրամազուտը բաղկացնում է 1,000,000ռ. Բացի սորանից Ընկերութիւնը ունի նոյնպէս առանձին, իբրև պաշար, դրամազուտ, որ 1871 թուականի հաշուովը կազմում է 2,431,560 ռ. և 31 կոպէկ: Այս վերջին դրամազուտը որոշելը կամքից չէ կախուած, այլ հիմնուած է ներկայացման գումարների հաշուի այն կանոնների վրայ, որ ընդունել են կեսնրի ապահովութեան բոլոր հիմնական Ընկերութիւնները: Այս դրամազուտը տարէցտարի նոր հաշիւների է ենթարկվում: Այս դրամազուտը պահպանվում է իբրև յաւելուած՝ ապահովացնողների ներկայացրած գումարների վերայ, որ անպատճառ հարկաւոր է բոլոր ապահովութիւնների ընդհանուր գումարը ծածկելու համար:

Ապահովացնողները իրաւունք ունին ներկայանայու Ընկերութեան ընդհանուր ժողովներումը, իսկ նոքա, որոնք ապահովացրել են ոչ պակաս 2800 ռուբլից, ձայնի իրաւունք ունին (§ 28): Տարեկան հաշիւը հրատարակվում է լրագրներում մարտ կամ ապրիլ ամիսներում, և առանձին օրինակներ ստանալ ցանկացողները, կարող են ստանալ պիսաւոր հաշուետնից կամ Ընկերութեան գործակալներից:

Առանց ուշադրութեան չպէտքէ թողնել և այն կրաշխաւորութիւնը, որ կարող է ունենալ իւրաքանչիւր ապահովացնող, այսինքն, երաշխաւորութիւն, որ նա կարող է

շարունակել ապահովութիւնը: Իւրաքանչիւր ապահովացնող պէտքէ համեմատէ ապահովութեան մեծութիւնը իւր միջոցների հետ, որպէս զի իւրաքանչիւր տարի ներկայացուող գումարները չձանրանային նորա վերայ և վերջապէս դոցա ներկայացնելը անկարելի չհամարուէր նորա համար: Ումը որ հաղար ռուբլի ապահովութիւնը զգալի զո՞ է թվում, Ընկերութիւնը նորան խորհուրդ է տալիս սկսել հարիւրներից. և այս չափաւոր գումարը կարող է նշանաւոր օգնութիւն լինել այն ընտանիքին՝ որ յանկարծակի զրկուել է իւր հօրից:

